# Պարույր Սևակ

## Ուզում եմ

Ես ուզում եմ, որ պարապը լցվի լացով,
բայց ոչ թե մոր, այլ մանուկի:
Ես ուզում եմ, որ կարապը ոչ թե մեռնի,
որ կարապը ապրի՛ երգով:
Ես ուզում եմ, որ տարափը տեղա արտի,
ոչ թե՝ իզուր՝ ծովի վրա:
Ես ուզում եմ, որ քարափը քարայծ պահի,
ոչ թե օձեր և մողեսներ:
Ու թե մահը անխուսափ է՝
Թող նա տանի ո՛չ հերոսին, այլ մարդուկին:
Թե կռիվը անխուսափ է՝
Թող չկռվեն երկու երկիր, այլ մարդ ու կին:
Թե արդուկելն անխուսափ է՝
Ահա շո՛րը - սի՛րտ մի հանձնեք տաք արդուկին:
Թաղե՞լ է պետք -
պառավ մորը որդին թաղի,
ոչ թե մայրը ջահել որդուն:
Եթե երգել՝
Այնպե՛ս երգել, որ մտքի մեջ չմտածեն. «Հոգի հանեց»:
Եթե գրկել՝
Այնպե՛ս գրկել, որ նվաղեք իրար գրկում:

Եթե հարգել՝
Այնպե՛ս հարգել, որ քծնանքի չվերածվի:
Եթե փրկել՝
Այնպե՛ս փրկել, որ փրկվածը երախտիքի խոսքեր չասի:
Ու թե պառկել՝
Այնպե՛ս պառկել, որ խափանվի տանկի՛ ճամփան,
ոչ թե հրշեջ մեքենայի:
Մի անգամ էլ թողեք ուզեմ.
Ես ուզում եմ՝
ինչպես մարդու նախահայրը իր օթևան քարանձավից՝
չար նախանձի կերպարանքով հին գազանն էլ
առանց ցավի մարդու սիրտը թողած՝ գնա՛...
Ես ուզում եմ.
Եթե գերվել՝
ոչ թշնամուց,
այլ խելքահան աղջիկներից:
Եթե մերվել՝
ապա երբեք չթթվելով:
Եթե լարվել՝
ապա միայն ստեղծելիս:
Եթե ճարվել՝
ապա փրկել մահամերձին:
Եթե ներվել՝
էլ չվիճե՛լ, էլ չկռվե՛լ:
Եթե սիրվել՝
միայն մեկի՛ց և մե՛կ անգամ...
Ես ուզում եմ, ձեր կարծիքով անհնա՞ղը:
Թո՛ղ, այդ դեպքում, կանայք ծնեն առանց ցավի՛,
Երկրները պատերազմեն, սակայն առանց արյան ծովի՛,
Հրդեհները առանց հրի՛ թող ճարակեն,

Մարդիկ իրար առողջությա՛մբ թող վարակեն:
Թե բարակել է հարկավոր՝
թող բարակի մե՛ջքը կանանց,
Թե տառակեր է հարկավոր՝
թող նա մնա մեզ անճանա՛չ:
Պատարագե՞լ է հարկավոր՝
համերգային մեծ բեմերի՛ց պատարագվի,
ո՛չ թե երգով դագաղ փակվի:
Կոտորակվե՞լ է հարկավոր՝
դպրոցական տետրակներո՛ւմ կոտորակվի,
ո՛չ թե մարդկանց սիրտը ծակվի:
Ի՞նչ, տրաքվե՞լ է հարկավոր.
թող տրաքվի մանկան փուչիկ-խաղալիքը,
այն էլ եթե անորակ է,
ոչ թե արդար և մեղավոր
մեր մարդկային մոլորակը...
Ես ուզում եմ...
Այն եմ ուզում՝ ինչ ամենքդդ...

25, 26.V.1957թ.
Մոսկվա